ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

ԺՈՒԺԱՀԱՆԴԵՍ, ՈՐՏԵՂ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԾԻՆ ՋՈՎԱՆՆԻԻ, ՆՐԱ ՊԱՊԻ, ՀՈՐ ԵՎ ՈՐԴՈՒ ՆԿԱՐՆԵՐԸ

Օրերս լեփ-լեցուն էր մայրաքաղաքի հնաշունչ, այժմ արդեն Մեյդան- Շարդեն կոչվող թաղամասի Ի.Գրիշաշվիլիու անվան «Քարվասլա» պատմության թանգարանի պատկերասրահը: Արվեստասերները շտապել էին դիտելու Վրաստանի կերպարվեստի տարեգրության մեջ մնայուն ավանդ թողած Վեփխվածե գերդաստանի գեղանկարիչների աշխատանքները: Ցուցադրության էին ներկայացված Իվանե, Ալեքսի, Ջովաննի, Բրունո Վեփխվածեների գործերը: Շուրջ 40 կտավ...



Ի.Վեփխվածե՝ «Շայթան բազար», «Ֆունիկուլյոր»... Ալեքսի Վեփխվածե՝ «Ղարաչոխելին», «Վաժա Փշավելան», «Բեքս Օպիզար»... Ջովաննի Վեփխվածե՝ «Մետեխիի կամուրջը», «Աբանոթուբանին», «Թբիլիսիի համայնապատկերը», «Հավլաբարի հին կամուրջը», «Տեսարան»... Բրունո Վեփխվածե՝ «Իմ սրբապատկերը...», «Խեւսուրյան օրորոցային»...

Սրահը, այո, համակված էր Թիֆլիսի ոգով: Մեր առջեւ մեր իմացած ու չիմացած քաղաքն էր, անցյալ դարի սկզբներից մինչեւ մեր օրերի Թիֆլիսը՝ իր պատմական հուշարձաններով, մշակույթի նշանավոր դեմքերով, իր ավանդույթներով, նիստուկացով, մեր նկատած ու չնկատած գեղեցկություններով, նաեւ իր մարդկանց բարի ու ավանդասեր, բարոյական բարձր նկարագրով... Ցուցահանդեսին ներկա երիտասարդ թբիլիսցին, կարծում ենք, ունեցավ հաճելի բացահայտումներ ու նորովի ճանաչեց իր ծննդավայրը, գուցեեւ հպարտացավ «Թիֆլիս» կոչված արժեքի կրողը լինելու զգացումից, իսկ տարեց դիտորդը հիշեց, կարոտեց, ափսոսաց...

Վեփխվածեների երրորդ սերնդի ներկայացուցչին եւ տվյալ ցուցահանդեսի հեղինակին՝ կերպարվեստի սիրված, հանրաճանաչ, պահանջված վարպետ Ջովաննի Վեփխվածեին, դժվարությամբ կարողացանք «գտնել» նրան շրջապատող, տարբեր սերնդի երկրպագուների սեղմ օղակներում...

«Այս տոհմական ցուցահանդեսով ես ցանկացա խորին տուրքս բերել իմ վաստակաշատ եւ նշանավոր նախնիներին. պապիս՝ Իվանեին եւ հորս՝ Ալեքսիին...».- Ջ.Վեփխվածեի այս խոստովանությունը, կարծում ենք, արվեց պարտքը կատարողի բավարարված հոգով: Մանավանդ որ, նույնչափ բավարարված ու գոհունակ էին նորից ու նորից դեպի կտավները շրջվող ու նրանցից դժվարությամբ կտրվող դիտորդները...

Շնորհավորանք, հաճելի բացահայտումների ուրախություն եւ նոր հանդիպումների մաղթանքներ հնչեցին թանգարանի տնօրեն Լիկա Մամացաշվիլու, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանի, հայտնի մանրանկարիչ Միխեիլ Մճեդլիշվիլու, Վրաստանի հայ երաժիշտների միության նախագահ Արտյոմ Կիրակոզովի գնահատականներում:

Ցուցահանդեսը կշարունակվի մինչեւ հոկտեմբերի 10-ը:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ԳՈՐԾԵՐԸ ԺՈՒԺԱԴՐՎԵԾԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ



Թբիլիսցի հանրաճանաչ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի գործերը ցուցադրվեցին Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելում: Ցավոք, Վրաստանում ծնված եւ մեծացած արվեստագետի թանգարան Թբիլիսիում գոյություն չունի, բայց Երեւանի թանգարանում բոլոր պայմաններն են ստեղծված, որպեսզի առավելագույնս ներկայացվի Սերգեյ Փարաջանովի ստեղծագործությունը:

Սերգեյ Փրաջանովն ու նրա ֆիլմերը, դեռեւս Խորհրդային Միության ժամանակներում իրենց մտածողությամբ դուրս եկան շրջափակված միջավայրից, նա ֆիլմերում ներկայացրեց իր խոսքը, որի համար էլ պատժվեց: Սերգեյ Փարաջանովը վախճանվեց 66 տարեկան հասակում, Երեւանում:

Բրյուսելում ներկայացվեցին Երեւանյան թանգարանում պահվող ցուցանմուշները՝ ֆոտո եւ տեսանյութեր, ռեժիսորի կողմից պատրաստված խամաճիկները, ապլիկացիաները: Արվեստի սիրահարներին տրվում է տեսահոլովակներ դիտելու հնարավորություն, որտեղ ներկայացվել էին նրա ֆիլմերի առանձին դրվագները:

Փարաջանովի ֆիլմերում նկարահանվել են վրացական թատրոնի եւ կինոյի աստղեր, այդ թվում՝ Սոֆիկո Ճիաուրելին, Վերիկո Անջափարիձեն եւ ուրիշներ: Ինչ խոսք, ցուցահանդեսի գլխավոր նմուշը Նուռն է:

Սերգեյ Փարաջանովի գործերը առաջին անգամ են ցուցադրվում Բելգիայում: Ցուցահանդեսը կշարունակվի մոտ 4 ամիս, եւ կավարտվի 2016 թվականի հունվարի 24-ին:

«Ախալի թառբա», N 233, 5 հոկտեմբերի

ՀՈԲԵԼՅԱՆ

ՎՐԱԺԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆՆԵՐԻ ԱՐՇՄԻՈՒԹՅՈՒՆԸ 110 ՏԱՐԵԿԱՆ Է

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԿԱՊԸ ԲԱԺՎԵԾ 1899 ԹՎԱԿԱՆԻՆ

Վրաստանի երկաթուղայինների արհմիությունը 110 տարեկան է:

Հոբելյանի առթիվ անցկացվեցին հանդիսավոր միջոցառումներ: 2000 թվականից Վրաստանի երկաթուղայինների արհմիությունը Եվրոպայի եւ համաշխարհային տրանսպորտայինների արհմիության միջազգային ֆեդերացիաների անդամ կազմակերպություն է, ուստի, հոբելյանական տարելիցի միջոցառումներին մասնակցելու նպատակով, տարբեր երկրների երկաթուղային ու տանսպորտային արհմիությունների ներկայացուցիչները ժամանել էին Վրաստան:

Ինչպես հայտարարեց Վրաստանի երկաթուղայինների արհմիության նախագահ Զուրաբ Նասարիան, վրացական երկաթուղայինների արհմիության հիմնադրման կապակցությամբ հայտնաբերվել են բվականին հետաքրքիր փստեր, դրվագներ եւ լուսանկարներ: «1871 թվականին բացվեց Փոթի-Զեստափոնի առաջին երկաթուղային հաղորդակցությունը, իսկ 1872 թվականին Թբիլիսին կապվեց Փոթի Սեւծովյան նավահանգստի հետ: 1883 թվականին երկաթուղային հաղորդակցություն հաստատվեց Բաքվի հետ, իսկ 1899 թվականին երկաթուղին միմյանց հետ կապեց Թբիլիսին ու Երեւանը:

Ինչպես նշեց վրաց երկաթուղայինների արհմիության նախագահը, սկզբնական փուլում մայրուղիներում իրականացվող աշխատանքային ծանր պայմաններն էլ դարձան արհմիության կազմավորման պատճառը, եւ արհմիությունը կանգնեց երկաթուղայինների իրավունքների ու շահերի պաշտպանության դիրքերում: Եվ դա տեղի ունեցավ 1905 թվականին, երբ գործադուլային դրամարկղների բազայի վրա կազմավորվեցին տարբեր ոլորտներում աշխատողների, այդ թվում՝ երկաթուղայինների արհմիությունները:

ՄԱՆՈՒԿ ԱՐԵՎՅԱՆ

«ՎՐԱՍՏԱՆԻ» ՏԵՂԵԿԱՏՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑՆՈՒՄ Է ՄԵԿԸ, ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐԻՆ

Խորագիրը վարում է աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության հասարակության հետ կապի դեպարտամենտի պետ, Վրաստանի հեռուստահաղորդումների խորհրդական ԻՐԻՆԵ ՂԼՈՆՏԻՆ:

Հարց. *86 տարեկան տարիքային կենսաթոշակառու եմ: 10 լարիով ավելացված թոշակը չի բավարարում դեղորայք գնելու ու կոմունալ ծախսերը մարելու համար: Ճիշտ է, օգտվում եմ համընդհանուր առողջապահության ապահովագրական ծրագրից, սակայն ինձ անհրաժեշտ վիրահատության համար դրանում գումարներ չեն նախատեսված: Նախորդ եւ ներկայիս կառավարությունները խոստանում էին կենսաթոշակների զգալի ավելացում, աշխատանքային ստաժի հաշվառում (ունեմ 56 տարվա աշխատանքային ստաժ) եւ այլն, սակայն ոչինչ չարվեց: Կարծում եմ՝ արդարացի չէ, երբ պատկառելի ստաժ ունեցողն ու կյանքում ոչ մի օր չաշխատած անձը նույն թոշակն են ստանում:*

Խնդրում եմ պարզաբանել, ե՞րբ է նախատեսվում տարիքային կենսաթոշակառուների, հաշմանդամների եւ խնամազուրկների թոշակների ավելացումը:

Ս. Նիկողոսյան

Բաթումի

Պատասխան. Ցավոք, չենք կարող կոնկրետ պատասխանել, թե երբ եւ ինչ չափով կավելացվեն կենսաթոշակները, հաշմանդամների ու խնամազուրկ անձանց նպաստները: Չգիտենք նաեւ, կենսաթոշակի հաշվարկման ժամանակ ե՞րբ հաշվի կառնեն աշխատանքային ստաժի առկայությունը: Կարող ենք միայն ասել, որ այդ կապակցությամբ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխությունների կատարում դեռեւս չի ծրագրավորված:

Հարց. *Գուցե դուք ասեք, թե որքա՞ն ժամանակ է պահանջվում սոցիալական սպասարկման գործակալության շրջանային ծառայությանը կենսաթոշակի հարցի քննարկման ու նշանակման համար:*

Ն.Սահակյան

Մառնեուլի

Պատասխան. «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 16-րդ հոդվածի համաձայն, կենսաթոշակի նշանակման հարցը գործակալության շրջանային ծառայությունը պետք է քննարկի դիմումի ու համապատասխան փաստաթղթերի ներկայացումից առնվազն 10 օրվա ընթացքում: Միաժամանակ նշենք, որ սահմանափակ հնարավորություններ ունեցողների ու տարիքային կենսաթոշակները նշանակվում են դիմումի ու անհրաժեշտ փաստաթղթերի հանձնման օրվանից:

Հարց. *Մանկուց հաշմանդամ եմ, որբ: Ստանում եմ հաշմանդամության թոշակ եւ ամենամսյա 22 լարիի նպաստ: Ապրում եմ հորեղբորս ընտանիքում: Լսել եմ, որ, օրենքում կատարված փոփոխություններից ելնելով, ինձ հասնում է ամսական 60 լարիի օգնություն: Եթե ճիշտ է, ապա խնդրում եմ պարզաբանել, ո՞ւմ դիմեմ այդ հարցով:*

Գ. Գեւորգյան

Թբիլիսի

Պատասխան. Որպեսզի 22 լարիի փոխարեն ստանաք 60 լարիի օգնություն, քանի որ երկուսը միասին ստանալ չեք կարող, հարկ է գրանցվեք տվյալների բազայում եւ ստանաք համապատասխան վարկանիշային միավորը: Եթե այդ հարցով անձամբ դիմել չեք կարող, ապա ձեր մերձավորը կարող է ձեր փոխարեն դիմել սոցիալական սպասարկման գործակալության շրջանային ծառայությանը՝ ըստ բնակության վայրի: Ծառայության աշխատակիցները կգան ձեր տուն, կուսումնասիրեն կենցաղային պայմանները, եւ եթե ձեր վիճակը կբավարարի օրենքի պահանջներին, ապա իրավասու հանձնաժողովը կորոշի ձեզ ամենամսյա օգնություն նշանակելու հարցը:

Հարց. *15 տարեկան եմ, մեկ ամիս առաջ վախճանվեց հայրս (հաշմանդամ էր ու չէր աշխատում): Հարեւաններն ասացին, որ ինձ թոշակ է հասնում, սակայն մայրս դեռ չի ներկայացրել փաստաթղթերը: Խորհուրդ տվեցին դիմել խմբագրություն: Ասացեք, խնդրեմ, հորս մահվան կապակցությամբ կարո՞ղ եմ թոշակ ստանալ:*

Բ. Առաքելյան

Նինոծմինդա

Պատասխան. Ձեր հոր մահվան կապակցությամբ, բոլոր դեպքերում թոշակը ստանալու եք: Ձեր մայրը կամ որեւէ ազգականը անհապաղ պետք է դիմեն սոցիալական սպասարկման գործակալության շրջանային ծառայությանը՝ ըստ բնակության վայրի: Խորհուրդ ենք տալիս դիմել անհապաղ, քանի որ, եթե ձեր հոր մահվանից երեք ամսվա ընթացքում դիմումը ներկայացնեք, ապա թոշակը կնշանակվի մահվան օրվանից, հակառակ դեպքում՝ դիմումի ու համապատասխան փաստաթղթերի ներկայացման օրվանից:

Հարց. *27 տարեկան եմ, ունեմ երկու երեխա, փոքրիկս հինգ ամսական է: Աշխատում եմ բանկում, բարձր աշխատավարձով: Ամուսնուս ու մորս աշխատավարձը փոքր է: Ցանկանում եմ դուրս գալ աշխատանքի, եւ իմ փոխարեն, երեխայիս պահելու համար, մայրս վերցնի անվճար արձակուրդ: Նախկինում դա թույլատրվում էր: Ցանկանում եմ իմանալ, նույն կարգը այսօր էլ գործո՞ւմ է:*

Մ. Մարտիրոսյան

Թբիլիսի

Պատասխան. Վրաստանի աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, երեխաների (թոռների) խնամքի համար արձակուրդ կարող են ստանալ տատը կամ ցանկացած այլ անձը, որը կստանձնի երեխաների խնամքը: Նկատի ունեցեք, որ գործող աշխատանքային օրենսգրքի համաձայն, կնոջ՝ հղիության, ծննդաբերության եւ երեխային խնամելու համար (վճարովի եւ անվճար) արձակուրդը, ընդհանուր առմամբ, կազմում է 477 օրացուցային օր:

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

²èàÔæàôÂÚàôÜ

ԴԻՏԵ՞Լ, ԹԵ՞ ՉԴԻՏԵԼ

Շատերն ասում են, որ 3D ձեւաչափով ֆիլմերը վնասակար են, թեպետ չեն կոնկրետացնում, թե ինչով են վտանգավոր: Գուցե դո՞ւք հուշեք:

Ա. Կիրակոսյան

Թբիլիսի

Նախ պետք է պարզել, թե ի՞նչ ազդեցություն են թողնում տեսողության վրա 3D ձեւաչափով ֆիլմերը: Այս հարցը շատերին է անհանգստացնում: Հստակ եւ լղոզված ուրվագծերով առարկաների վրա մեջընդմեջ հայացքի կենտրոնացումը հոգնեցնում է աչքերը, եւ կինոնկարը դիտելուց հետո կարող են գլխացավեր առաջանալ, երբեմն էլ տեսողության վատացում է նկատվում: Այդպիսի տհաճություններից խուսափելու համար, պետք է 2D ձեւաչափով մելոդրամաներ եւ կատակերգական ֆիլմեր դիտել, իսկ 3D ձեւաչափը հարմար է ֆանտաստիկ եւ մարտական ֆիլմեր դիտելու համար: Սակայն, նույնիսկ այդ ժապավենների դեպքում, ոչ այնքան դինամիկ հատվածները կարելի է դիտել առանց ակնոցի: Եթե դուք վատ տեսողություն ունեք, օգտվեք լինզաներից, այլ ոչ թե ակնոցից, քանի որ դրանցով աչքերն այնքան էլ չեն լարվում:

ì²ðì°È²Î°ðä

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԵՆ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԱԳՐԵՍԻՎՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Հաճախ, առանց որեւէ պատճառի, ամուսինս սկսում է կոպտել, մանրուքներից կառչել, դիտողություններ անել...

Չգիտեմ ինչպե՞ս վարվել, առավել եւս, որ ամեն ինչ անում ենք զայրանալու պատրվակներ չստեղծելու համար:

Վ. Կ.

Բոլնիսի

ԱՄՆ-ի Ջորջիա նահանգի հոգեբանները եկել են այն եզրակացության, որ ագրեսիվ վարքագիծը եւ բռնությունը բնորոշ են իրենց առնականությանը ոչ վստահ տղամարդկանց: Իրենց հետազոտությունների արդյունքները հեղինակները հրապարակել են Injury Prevention հանդեսում, իսկ դրանց համառոտ կարելի է ծանոթանալ Daily Mail-ի կայքում:

Իրենց աշխատության մեջ հոգեբաններին հետաքրքրել է այն տղամարդկանց վարքագիծը, ովքեր վստահ չեն, որ իրենք առնական են: Պարզվել է, որ վերջիններս, չգտնելով իրենց արիության հաստատումը, անհամեմատ ավելի շատ են դիմում ագրեսիայի եւ բռնարարքների, քան իրենց ուժերին վստահ տղամարդիկ:

Մասնավորապես, նման տղամարդիկ ավելի հաճախ են հարձակումներ կատարում զենքի կիրառմամբ եւ ֆիզիկական խեղումներ պատճառում մյուսներին: Ինչպես ցույց է տվել հետազոտությունը, այն տղամարդիկ, ովքեր վստահ են իրենց առնականությանը, խիստ հազվադեպ են դիմում ագրեսիայի եւ բռնության:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

ԳՏԵԼ ԵՆ ՎԱՂԱԺԱՄ ՄԱՀՎԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՏՃԱՌԸ

ԱՄՆ-ի Health Metrics and Evaluation (IHME) ինստիտուտի գիտնականներն անառողջ սնունդը համարել են վաղաժամ մահվան ամենատարածված պատճառը:

Փորձագետների եզրակացությունների համաձայն, սխալ սնունդը բնորոշվում է մրգերի, բանջարեղենի, ընկուզեղենի եւ ձավարեղենի քիչ գործածությամբ եւ կարմիր մսի, աղի եւ ոչ ալկոհոլային քաղցր ըմպելիքների շատ գործածությամբ:

Գիտնականները նաեւ նշում են, որ անառողջ սնունդն ավելի բացասական ազդեցություն է գործում մարդու օրգանիզմի վրա, քան ալկոհոլի եւ ծխախոտի գործածումը: Սխալ սնունդը հանգեցնում է օրգանիզմի ոչ կայուն աշխատանքի, բազմաթիվ հիվանդությունների, ներառյալ՝ սրտի հիվանդությունները, ինսուլտը, շաքարախտը եւ այլ քրոնիկ ախտեր:

Հետազոտության շրջանակներում նաեւ պարզվել է, որ ռիսկի միատեսակ գործոնները տարբեր երկրներում տարբեր ազդեցություն են ունենում մահացության վրա: Օրինակ՝ Հարավարեւելյան Ասիայի երկրներում եւ Հնդկաստանում մարդիկ ավելի հաճախ մահանում են բնապահպանական վատ իրադրության պատճառով, մինչդեռ բարձր եկամուտներով երկրներում մահվան գլխավոր պատճառներից մեկը ծխելն է: Աֆրիկայի երկրներում գիտնականները նշում են միանգամից մի քանի հիմնական գործոններ, որոնք հանգեցնում են վաղաժամ մահվան. թերասնումը, կեղտոտ ջուրը, չպաշտպանված սեռական հարաբերությունները եւ ալկոհոլի գործածումը:

Առողջության համար ռիսկի գխավոր գործոնների ուսումնասիրման աշխատանքը կատարվել է 108 երկրում, 1990 թվականից մինչեւ 2013 թվականն ընկած ժամանակամիջոցում:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉ ԵՆ ՊԱՏՄՈՒՄ ԵՂՈՒՆԳՆԵՐԸ

Եղունգներ բոլորն ունեն, բայց ոչ բոլորն են դրանք ուշադիր զննում: Եվ քչերը գիտեն, որ եղունգները բավականին հետաքրքիր բաներ կարող են պատմել իրենց տիրոջ առողջության մասին: Եղունգի տեսքի եւ գույնի փոփոխությունը վկայում է նյութափոխանակության խախտումների, վիտամինների եւ միկրոտարրերի պակասի, ինչպես նաեւ նյարդային, էնդոկրին կամ անոթային հիվանդությունների մասին:

Սպիտակ կետիկներ

Եղունգներում այս օդային գրպանիկները՝ սպիտակ կետիկները, ամենից հաճախ առաջանում են եղունգի աննկատ վնասվածքներից հետո: Այս դեպքում, անհանգստանալու կարիք չկա: Սակայն եղունգների «ծաղկման» պատճառ կարող է լինել նաեւ վիտամինների պակասը կամ նյութափոխանակության խանգարումը: Ավելի շատ բանջարեղեն, կանաչեղեն ու մրգեր կերեք:

Փխրուն եւ կոտրատվող եղունգներ

Դուք կամ ջրի հետ կապված շատ գործեր եք անում, կամ առնչվում եք քիմիական նյութերի հետ՝ վնասելով եղունգները, կամ էլ վահանաձեւ գեղձի հետ կապված ինչ-որ խնդիր կա: Աշխատեք ձեռնոցներով, օգտագործեք ձեռքերը եւ եղունգները պաշտպանող քսուքներ: Ընդունեք տարբեր վիտամիններ, դրանք ամրացնում են եղունգները: Եթե եղունգների փխրունությունն աշխատանքի հետ կապված չէ, անպայման դիմեք էնդոկրինոլոգի:

Երկնագույն եղունգներ

Այսպիսի նրբերանգով եղունգներ ունեն այն մարդիկ, ում արյան շրջանառությունը վերջույթներում լավ չի կատարվում: Սա սրտային կամ թոքային անբավարարության նշաններից մեկն է: Հաճախ ուղեկցվում է շնչահեղձությամբ եւ թուլությամբ: Անհապաղ պետք է դիմել մասնագետի:

Հիշեք. վարդագույն, հարթ, փայլուն եւ մատի ձեւին լիովին համապատասխանող եղունգներն առողջության նշան են:

Եթե եղունգները դեղնել են լաքից. Տաք ջրի մեջ լցրեք այնքան քացախ, որ շատ թթու չլինի, ավելացրեք 10-15 կաթիլ կիտրոնի հյութ եւ մատները պահեք այդ լուծույթի մեջ 15-20 րոպե: Այս գործողությունը կրկնեք օրվա մեջ 2-3 անգամ:

Եթե եղունգները փխրուն եւ կոտրատվող են. Խառնեք 3-ական ճաշի գդալ ձեթ եւ խնձորի քացախ եւ այդ լուծույթի մեջ եղունգները պահեք 20-30 րոպե: Այս գործողությունը պետք է կրկնել շաբաթական 2 անգամ՝ մինչեւ եղունգները լրիվ կամրանան: Դրանից հետո ձեռքերը պետք չէ լվանալ, պարզապես լավ չորացրեք:

Եթե եղունգները շերտավորվում են. ամեն օր պատրաստեք ծովային աղով ջրի լուծույթ եւ եղունգները դրա մեջ պահեք 15-20 րոպե: Դրանից հետո պետք է ձեռքերը պարզաջրել եւ լավ չորացնել: Այնուհետեւ, եղունգների արմատներին ձիթապտղի յուղ քսեք:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՊԵՍ ՀԱՃՈՅԱՆԱԼ ՄԱՐԴՈՒՆ

Հաճոյախոսելիս սովորաբար շեշտում են մարդու այս կամ այն առավելությունը: Անկեղծ, առանց չափազանցությունների հաճոյախոսությունը միշտ հաճելի տրամադրություն է ստեղծում, իսկ չափազանցված, կեղծավոր հաճոյախոսությունը հաճախ կարող է վիրավորական հնչել կամ վերածվել քծնանքի:

Կանանց հաճոյախոսելիս՝ տղամարդիկ մեծամասամբ գովում են նրանց արտաքին բարեմասնությունները. «Այսօր հրաշալի արտաքին ունեք», «Այսպիսի սանրվածքը ձեզ շատ է սազում», «Դուք շատ գեղեցիկ եք» եւ այլն: Սակայն տղամարդկանց խորհուրդ է տրվում խելացի կանանց հաճոյախոսություններ անելիս, բացի արտաքինից, նկատի ունենալ նաեւ խելքը: Թվում է, թե հաճոյախոսելը միայն տղամարդկանց «մենաշնորհն» է, բայց արի ու տես, որ տղամարդկանց ինքնասիրությունը շոյվում է, երբ լսում են իրենց ուժը, խելքը, արտաքին տեսքը գովաբանող արտահայտություններ:

Պետք չէ, ավելորդ համեստությունից ելնելով, մերժել գովաբանությունը, քաղաքավարությունը պահանջում է, որ այն մարդը, ում ուղղված է հաճոյախոսությունը, լինի տղամարդ, թե կին, սիրալիր ժպտա եւ շնորհակալություն հայտնի:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Աթենացիք սուտ խոսողներուն լեզու կը կտրեին, եթե այս սովորությունը նորեն մտնե՝ քիչ մարդ պիտի տեսնենք, որ բերնին մեջ լեզու ունենա:

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ
(1843-1891)
Հայ գրող, երգիծաբան

Չեմ ցանկանա տանել երբեք ստրկական անարգանքը:

ՆԻԿՈԼՈՋ ԲԱՐԱԹԱՇՎԻԼԻ
(1817-1845)
Վրաց բանաստեղծ

Երբ երկու հոգի միեւնույն բանն են անում, ստացվում է ոչ միեւնույն բանը:

ՄԱՐԿՈՍ ՏԵՐԵՆՏԻՈՍ
(մ.թ.ա.116-մ.թ.ա.27)
Հռոմեացի գիտնական

Մեղուն բնավ էլ այնքան զբաղված չէ, որքան թվում է. ուղղակի նա չի կարող ավելի դանդաղ տզզալ:

ՔԻՆ ՀԱԲԱՐԴ
(1868-1930)
Ամերիկացի նկարիչ

Հարբեցողությանն անձնատուր եղած կանայք ծննդաբերում են այնպիսի երեխաներ, որոնք այդ առումով նման են իրենց մայրերին:

ԱՐԻՍՏՈՖԱՆ
(մ.թ.ա. 446-մ.թ.ա. 380)
Հին հույն կատակերգակ

Չափազանցումը բարեկիրթ մարդկանց սուտն է:

ԺՈԶԵՖ ՄԵՍՏՐ
(1753-1821)
Ֆրանսիացի աստվածաբան

Փաղաքշանքով գրեթե միշտ ավելի շատ բանի կհասնես, քան՝ ուժով:

ԵԶՈՊՈՍ
(մ.թ.ա. 620 - մ.թ.ա. 564)
Անտիկ առակախոս

Սուտն է միայն խայտառակում, մոլորությունը՝ երբեք:

ԼԻԽՏԵՆԲԵՐԳ
(1742-1799)
Գերմանացի գիտնական

Իրենց թշվառությունների համար մարդիկ հակված են մեղադրել ճակատագրին, աստվածներին եւ ում ասես, բայց ոչ միայն իրենք իրենց:

Ա.ՂԱԶԱՐՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

²Ü°Î¸à²Ü°ð

** - Մեկը գնում է բժշկի, ասում է.*

- Բժիշկ ջան, սկռելոզ ունեմ:

Բժիշկը հարցնում է.

- Ինչ ունե՞ք:

- Ի՞նչ ունեիիի...

** Առավոտյան կինը արթնացնում է ամուսնուն.*

- Սիրելիս, արթնացիր, արեւս, վեր կաց, իմ քաղցր ամուսին, արթնացիր: Սիրելիս, մաս-մաս չէ, դու լրիվ արթնացիր:

** Ատամնաբուժը հիվանդի ատամները սարքելուց հետո ասում է.*

- Հիմա էս ջրով կողողես բերանդ ու կթքես:

- Հիվանդը վախեցած հարցնում է.

- Բժիշկ ջա՜ան, հեչ հույս չկա՞:

** Սրճարանում հաճախորդը մատուցողին ասում է.*

- Ինձ մի հատ ՀՈՒՅԹ բերեք:

Մատուցողը ուղղում է.

- Հույթ չէ, հյութ:

- Դու էլ ԳՈՒՅՏ արիր:

** Լոռեցին մորը հարցնում է.*

- Մամ, ինձ ակնոցներով տղա չի՞ զանգել:

** Աշխատողը 20 լարի պակաս աշխատավարձ է ստանում եւ դիմում է հաշվապահին.*

- Դուք ինձ 20 լարի պակաս եք տվել:

- Ամեն ինչ ճիշտ է,- ասում է հաշվապահը,- բայց անցած անգամ, երբ Ձեզ 20 լարի ավել էի տվել, ինչու՞ լռեցիք:

- Մեկ անգամ սխալվեցիք, դրա վրա կարելի է աչք փակել, բայց երկրորդ անգամ՝ արդեն շատ կլինի...

** Ամուսինը հայելու առջեւ իրեն կարգի է բերում: Կինը հարցնում է.*

- Ո՞ւր ես գնում:

- Չիարշավի:

- Դե՛, արագացրու, թե չէ, ձիդ արդեն երկու անգամ զանգել է...

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ 2700 ՏԱՐԵԿԱՆ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Էջմիածնի 2700-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում, Սերժ Սարգսյանն այցելել է նաեւ քաղաքի նոր վերանորոգված Ե.Թադեւոսյանի անվան գեղարվեստի դպրոց: Նախագահը ծանոթացել է իրականացված աշխատանքներին եւ, դրա արդյունքում՝ ուսումնական հաստատությունում 300 աշակերտի համար ստեղծված պայմաններին: Հայաստանի նախագահն այնուհետեւ հարգանքի տուրք է մատուցել արցախյան ազատամարտի հերոսների հիշատակին, ծաղիկներ դրել հերոսների հիշատակը հավերժացնող հուշարձանին:

Նախագահ Սերժ Սարգսյանը քաղաքապետարանի նիստերի դահլիճում, քաղաքի բնակիչների, բազմաթիվ հյուրերի, էջմիածնի պատվավոր քաղաքացիների հետ միասին, մասնակցեց էջմիածնի 2700-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին:

ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ԱՌԱՋԱԾԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հոկտեմբերի 3-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժային:

Հանդիպմանը զրուցակիցները քննարկել են Դուշանբեում կայացած ՀԱՊԿ հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանում ընդունված որոշումների կատարման ընթացքին եւ կազմակերպությունում Հայաստանի նախագահության առաջնայնություններին վերաբերող հարցեր:

Հայաստանի նախագահը եւ ՀԱՊԿ գլխավոր քարտուղարն անդրադարձել են Հավաքական անվտանգության կազմակերպության կովկասյան տարածաշրջանում անվտանգության ապահովման հարցերին:

Սերժ Սարգսյանը եւ Նիկոլայ Բորդյուժան քննարկել են վերջին օրերին հայ-ադրբեջանական պետական սահմանին եւ դարաբաղա-ադրբեջանական ուժերի շփման գծում հրադադարի խախտման հետեւանքով առաջացած իրավիճակը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ՝ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Հոկտեմբերի 8-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) նախագահ Ջիանի Բուքիքիոյին, ով Հայաստան է ժամանել Հայաստանի Սահմանադրական դատարանի կողմից հրավիրված միջազգային խորհրդաժողովին մասնակցելու առիթով:

Սերժ Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Վենետիկի հանձնաժողովի այն անդամներին, ովքեր Հայաստանի Սահմանադրական փոփոխությունների նախագծի մշակման գործընթացում համագործակցել եւ բարձրորակ մասնագիտական օժանդակություն են ցուցաբերել սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովին: Այդ համատեղ աշխատանքի արդյունքում մշակված փաստաթուղթն օրեր առաջ արժանացել է նաեւ Ազգային ժողովի հավանությանը:

Հանդիպման ընթացքում զրուցակիցները քննարկել են սահմանադրական բարեփոխումների գործընթացի հետագա քայլերին վերաբերող այլ հարցեր:

ԿՀԱՍՏԱՏՎԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը այսօր՝ հոկտեմբերի 10-ին, կգումարի արտահերթ նիստ՝ նվիրված սահմանադրական բարեփոխումների հանրաքվեին: Նիստում կքննարկվի 2015 թվականի դեկտեմբերի 6-ին Հայաստանի Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի կազմակերպման ու անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը:

Հանրաքվեի մասին օրենքով սահմանված է, որ Սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի քարոզչությունն սկսվում է հանրաքվեի նշանակման օրվանից եւ ավարտվում քվեարկությունից մեկ օր առաջ: Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ օրենքով չարգելված ձեւերով եւ միջոցներով քարոզչություն կատարելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, կուսակցությունները եւ հասարակական միավորումները:

Նշենք, որ հոկտեմբերի 8-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ստորագրեց Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին նշանակելու մասին հրամանագիրը:

ԿԱՆԽԱԳԾՎՈՒՄ Է ՉՈՐՍ ՏՈԿՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ



Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը համոզված է, որ Հայաստանը մինչեւ տարվա վերջ կապահովի մոտ 4 տոկոս տնտեսական աճ:

Ազգային ժողովում վարչապետն ընդգծեց, որ մոտ 25 տոկոսով նվազել են Հայաստան ուղղվող տրանսֆերտները, սակայն գյուղատնտեսության ոլորտի աճը հնարավորություն կտա որոշակիորեն ծածկել այդ պակասը: «Ես համոզված եմ, որ մենք մինչեւ տարվեվերջ կարծանագրենք 3-3,5, մինչեւ 4 տոկոս տնտեսական աճ: Իհարկե, էկոնոմիկայի նախարարությունն ավելի լավատես է այս հարցում, սակայն ավելի լավ կլինի այս մասին խոսենք փաստերով»,- շեշտեց վարչապետը եւ հավելեց, որ աշխարհում ընթացող «տնտեսական պատերազմը» բացասական ազդեցություն է ունենում Հայաստանի վրա՝ վստահեցնելով, որ կառավարությունը՝ Հայաստանի նախագահի գլխավորությամբ, ամեն ինչ անելու է, որպեսզի հաղթահարվեն այդ դժվարությունները: «Ես կարծում եմ, որ մենք կհասնենք հաջողության: Ես կարծում եմ, որ մենք չորրորդ եռամսյակում կունենանք ներմուծման եւ արտահանման ակտիվություն, ինչն էլ կհանգեցնի տնտեսության ակտիվությանը»,- եզրափակեց վարչապետը:

Նշենք, որ այս տարվա հունվար-օգոստոսին 2014թ. նույն ժամանակահատվածի համեմատ Հայաստանում գյուղատնտեսական եւ ձկնորսական համախառն արտադրության ծավալն աճել է 13,9 տոկոսով եւ կազմել ավելի քան 1 մլրդ 103,5 մլն ԱՄՆ դոլար:

ԱՐՄԵՆ ՋԻԳԱՐԽԱՆՅԱՆԸ 80 ՏԱՐԵԿԱՆ Է

«Մարդ չի կորցնում իր երիտասարդությունը, եթե դեռ ի վիճակի է զարմանալ: Զարմանքն ամեն ինչի հիմքն է». այս խոսքերը պատկանում են հայ մեծանուն դերասան, հայկական ու ռուսական կինոյի եւ թատրոնի վաստակաշատ արտիստ, ռեժիսոր Արմեն Ջիգարխանյանին, ով հոկտեմբերի 3-ին տոնեց ծննդյան 80-ամյակը:

Արմեն Ջիգարխանյանը ծնվել է 1935 թվականին, Երեւանում: 1958 թ.-ին ավարտել է Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտը: Նույն թվականից Երեւանի Կոնստանտին Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնի դերասան էր:

Ջիգարխանյանը 1996 թ.-ից հանդես է գալիս տարբեր թատրոնների ներկայացումներում: Հենց այդ թվականին էլ նա Մոսկվայում հիմնել է իր՝ «Ջիգարխանյանի թատրոնը», բեմադրել հարյուրավոր ներկայացումներ:

1959 թ.-ից սկսել է նկարահանվել նաեւ ֆիլմերում: Ջիգարխանյանը նկարահանվել է շուրջ 300 ֆիլմում, ինչի համար նրա անունը գրանցվել է «Գինեսի ռեկորդների գրքում»:



Արմեն Ջիգարխանյանն արժանացել է ՀԹԳՄ «Վահագն» (2002թ.), ՌԴ Թատերական գործիչների միության «Բյուրեղապակե Տուրանդոտ» (2010թ.) մրցանակների, ՀՀ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի (1996թ.), ՌԴ Հայրենիքին մատուցած ծառայությունների համար III (1995թ.) եւ IV (2005թ.) աստիճանների, Սուրբ Ալեքսանդր Նեւսկու (2006թ.) շքանշանների:

ԶՐՕՐՀՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 4-ին, հանդիսապետությամբ Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի, Էջմիածնի Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ պատարագ: Պատարագիչը Արգենտինայի Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Գիսակ արքեպիսկոպոս Մուրադյանն էր:

Հավարտ Սուրբ եւ Անմահ պատարագի, սեպտեմբերի 27-ին Մայր Աթոռում օրհնված նոր՝ Հաղթության Սրբալույս Մյուռոնով, նախագահությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի, կատարվեց Զրօրհնեքի արարողություն:

Պատարագի արարողությանը ներկա էին նաեւ Մյուռոնօրհնության առիթով Հայաստան ժամանած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարեբարներ, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմերի ներկայացուցիչներ:

ՄԵԿ ՏԱՐՈՒՄ ԴՈԼԱՐԸ ԹԱՆԿԱՑԵԼ Է 17,7 ՏՈԿՈՍՈՎ

Այս տարվա սեպտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 481,1դրամ, ինչը գերազանցել է 2014թ. սեպտեմբերի համապատասխան ցուցանիշը 17,7 տոկոսով (408,8 դրամ): Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2015թ. սեպտեմբերին, 2014թ. դեկտեմբերի համեմատ, սպառողական գների ընդհանուր մակարդակը նվազել է 2 տոկոսով, իսկ հաշվարկային փոխարժեքն աճել է 3,8 տոկոսով:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԸ ԱՃԵԼ ԵՆ

Այս տարվա հունվար-սեպտեմբերին, 2014թ. նույն ժամանակահատվածի համեմատ, Հայաստանում սպառողական գներն աճել են 4,7 տոկոսով. սպառման ապրանքների գների ինդեքսը կազմել է 105,3 տոկոս, պարենային ապրանքներինը՝ 104,9 տոկոս, ոգելից խմիչքինը եւ ծխախոտինը՝ 102 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 105.9 տոկոս, իսկ ծառայությունների ոլորտում, 2014թ. առաջին ինն ամիսների համեմատ, գների աճը կազմել է 3,2 տոկոս:

2015թ. հունվար-սեպտեմբերին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0,2 տոկոս, ինչը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (0,1 տոկոս նվազում), 0,1 տոկոսային կետով:

ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է ՀՈՎՀԱՆՆԵՍ ՁԱՆԱԶԱՆՅԱՆԸ



Հոկտեմբերի 4-ին, երկարատեւ ու ծանր հիվանդությունից հետո, 68 տարեկան հասակում վախճանվեց «Արարատ-73»-ի անվանի ավագ Հովհաննես Զանազանյանը: Ծնվել է 1946 թվականին: ԽՍՀՄ ֆուտբոլի առաջնության բարձրագույն լիգայում հանդես է եկել Երեւանի «Արարատ»-ի կազմում 1966 թվականից: 1971 թվականին արժանացել է ԽՍՀՄ առաջնության արծաթե մեդալի: 1973 թվականին երկրի գավաթակիրն էր եւ ԽՍՀՄ առաջնության ոսկե մեդալակիրը, Մյունխեն 20-րդ խաղերի Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիրը: 1971-ին եւ 1973-ին ընդգրկվել է ԽՍՀՄ 33 լավագույն ֆուտբոլիստների ցուցակում: Հանդես է եկել ԽՍՀՄ եւ Օլիմպիական հավաքականներում: Ֆուտբոլիստի կարիերայից հետո, ունեցել է մարզչական կարիերա՝ գլխավորելով ՀՄԸՄ-ն, Հայաստանի երիտասարդական հավաքականը, «Բանանցը» եւ այլ թիմեր:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

10.10.2015. Սուրբ թարգմանիչ վարդապետների՝ Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Կլայեցու տոն

Սուրբ թարգմանիչ Վարդապետների տոնը հայ ժողովրդի ամենանվիրական եւ սիրված ազգային-եկեղեցական տոներից է: Թարգմանիչ վարդապետների հիշատակը Հայ եկեղեցին տոնում է տարին երկու անգամ: Առաջինը կոչվում է «Տոն սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրովբայ» եւ երկրորդը կոչվում է «Տոն մեր սուրբ թարգմանիչ վարդապետների՝ Սահակի եւ Մեսրոպ Մաշտոցի, եւ նրանց սուրբ աշակերտների՝ Եղիշե Պատմիչի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Կլայեցու», որը շարժական է, եւ տոնը նշվում է հոկտեմբերի 3-ից մինչեւ նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում: Թարգմանիչ ընդհանուր անվան տակ հայտնի են Սուրբ Մեսրոպ Մաշտոցին եւ Սուրբ Սահակ Պարթեւին աշակերտած շուրջ հարյուր սաներ:

13.10.2015. Սուրբ առաքյալներ Անանիայի, Մատաթիայի, Բառնաբասի, Փիլիպպոսի, Յովհաննեսի եւ Շիղայի՝ Սիղվանոսի հիշատակության օր

ՀՆԷԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄՄԵՐԱԿԱՆ ՀԵՏՔԸ՝ ԳՐԱԿԼԻԱՆԻՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՓՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ինչպես հաղորդել էինք («Վրաստան», 28 օգոստոսի, 2015թ.) Գրակլիանի բարձունքում վրաց հնէաբանների կողմից հայտնաբերվել էր մեր թվարկությունից առաջ վեցերորդ դարի պտղաբերության աստվածությանը նվիրված տաճարի ավերակները: Տաճարի երկու աղոթարանների պատվանդանների վրա հայտնաբերվել են մինչ օրս անհայտ գրառումներ: Նոր հայտնագործությունը վկայում է, որ Վրաստանի տարածքում դեռեւս 2700 տարի առաջ օգտվել են գրից:

Մասնագետների որոշակի մասի հավաստմամբ, չնայած նիշերը որոշակիորեն հնարավոր է նմանեցնել արամեական գրառմանը, սակայն ակնհայտ են նաեւ տարբերությունները: Մասնավորապես, արվեստագետ եւ պիկտոգրաֆ Գիորգի Գիգաուրին գտնում է, որ հայտնաբերված գրառումները կարող են լինել շումմերական նիշեր, ավելի ստույգ՝ շումմերական «ջրից դուրս եկած աստվածության» խորհրդանիշ:

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՐՆՈՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ - ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԿՐԹԱ-ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2015/2016 ուսումնական տարվա ընդունելություն հետեւյալ մասնագիտությունների եւ մասնագիտացումների գծով՝ առկա եւ հեռակա կրթաձեւերով.

Կրտսեր մասնագետի որակավորմամբ՝

«Հաշվապահական հաշվառում»

«Ֆինանսներ եւ վարկ»

Ուսման տեւողությունը՝ 3 տարի (առկա կրթաձեւով)

«Համակարգչային համակարգերի եւ ցանցերի սպասարկում»

Ուսման տեւողությունը՝ 4 տարի

Բակալավրի որակավորմամբ՝

«Ֆինանսներ եւ վարկ» (բանկային գործ)

«Ֆինանսներ եւ վարկ» (մաքսային գործ)

«Հաշվառում եւ աուդիտ»

«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր»

Ուսման տեւողությունը՝ 4 տարի (առկա եւ հեռակա կրթաձեւերով):

Մագիստրոսի որակավորմամբ՝

«Հաշվառում եւ աուդիտ»

Ուսման տեւողությունը՝ 1 տարի 6 ամիս (առկա եւ հեռակա կրթաձեւով):

Ուկրաինական Տերնոպոլի ազգային տնտեսական համալսարանի (բակալավրի կամ մագիստրոսի) դիպլոմ ստացած Վրաստանի քաղաքացիները, ովքեր ունեն 4-րդ աստիճանի հավաստագրեր, կարող են իրենց կրթական-որակավորման մակարդակը շարունակել Վրաստանի պետական ցանկացած բուհում, առանց միասնական ազգային քննությունների հանձնման (հանձնվում է միայն ներբուհական քննությունը):

Ինստիտուտի շրջանավարտներն ստանում են Ուկրաինայի Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի պետական դիպլոմ, որը ճանաչվում է աշխարհի 82 երկրներում:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երեւան, Ավան, Աճառյան 31

Հեռ.՝ (+374 10) 61-22-02, (+374 10) 61-30-10, (+374 10) 62-29-69

e-mail: erfiltanx@yahoo.com

Կայք-էջ: www.eftneu.am, www.tneu.edu.ua

Վրաստանում Երեւանյան կրթա-գիտական ինստիտուտի ներկայացուցիչ՝ (+995) 593 58-24-00

Նկարում.- ՏԱՏՀ-ին Երեւանի կրթա-գիտական ինստիտուտի տնօրեն Ս.Հուդրայանն ընդունում է Ուկրաինայի կրթության նախարար Ս.Կվիտին

ՍՊՈՐՏ

ԼԵՎԱՆ ԿՈԲԻԱՇՎԻԼԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ

Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի պաշտոնում, 4 տարով, ընտրվել է նախկինում ճանաչված կիսապաշտպան, 38 տարեկան ֆուտբոլիստ Լեւան Կոբիաշվիլին: Նա փոխարինեց Զվիադ Սիճինավային, ով 6 տարի զբաղեցնում էր այդ պաշտոնը:

Կոբիաշվիլին պրոֆեսիոնալ կարիերան ավարտեց 2014 թվականին: Նա հայտնի է Թբիլիսիի «Դինամոյի», Ռուսաստանի «Ալանիայի», Գերմանիայի «Ֆրայբուգի», «Շալկե-04» եւ «Հերտայի» կազմում ունեցած ելույթներով:

Վրաստանի հավաքականի կազմում Կոբիաշվիլին մասնակցել է 100 խաղի, որոնց ընթացքում 12 գոլ է խփել:

ՖՈՒՏԲՈԼ. ԽՈՇՈՐ ՀԱՇՎՈՎ ՀԱՂԹԱՆԱԿ

Վրաստանի ֆուտբոլի ազգային հավաքականը, Եվրոպայի ֆուտբոլի 2016 թվականի առաջնության նախընտրական մրցաշարի շրջանակներում, անցկացրեց նախավերջին հանդիպումը եւ 4:0 խոշոր հաշվով պարտության մատնեց Ջիբրալթարի հավաքականին: Վրաստանի հավաքականը «D» խմբում, 6 թիմերի թվում, 5 միավորով հանգրվանել է 5-րդ տեղում:

Հիշեցնենք, որ նախընտրական փուլի եզրափակիչ հանդիպումը վրաց ֆուտբոլիստները կանցկացնեն հոկտեմբերի 11-ին, Գերմանիայի հավաքականի հետ մրցակցի դաշտում:

Ինչ վերաբերում է Հայաստանի հավաքականին, ապա հայ ֆուտբոլիստներն ընկերական հանդիպում անցկացրին Ֆրանսիայի թիմի հետ եւ զիջեցին 0:4 հաշվով: Իսկ Եվրոպայի առաջնության նախընտրական մրցաշարի շրջանակներում, «I» խմբում Հայաստանի թիմը փուլի վերջին հանդիպմանը ուժերը կչափի Ալբանիայի թիմի հետ սեփական դաշտում: Ներկա դրությամբ, Հայաստանի թիմը 4 միավորով զբաղեցնում է աղյուսակի 5-րդ տեղը:

ՌԵԳԲԻ. ՀԱՂԹԱՆԱԿ՝ ԴԺՎԱՐԻՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Վրաստանի ռեգբիի ազգային հավաքականը, Անգլիայում անցկացվող աշխարհի գավաթի խաղարկության իր խմբի մրցաշարի վերջին հանդիպմանը, դժվարին պայքարում՝ 17:16 հաշվով, պարտության մատնեց Նամիբիայի հավաքականին եւ հավաքեց 8 միավոր՝ զբաղեցնելով երրորդ տեղը, ինչը, Վրաստանի հավաքականին ընձեռում է գավաթի հաջորդ (2019 թ.) խաղարկության մրցաշարին ավտոմատ մասնակցության իրավունք, այն պայմանով որ հոկտեմբերի 9-ին անցկացված Նոր Զելանդիա-Տոնգա հանդիպմանը Տոնգան պարտություն կկրի: Եթե Տոնգայի հավաքականը հաղթի, ապա այն շրջանցում է մեր թիմին, հետեւաբար, նվաճում է 4 տարի անց անցկացվելիք առաջնության մասնակցության ուղեգիրը:

ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Քաղաք Հայաստանում: 6.Անդուր, շատ գեշ: 8.Վրաց հայտնի գրող Գուրամիշվիլին (անունը): 9.... Պալլաս: 11.Խիտ, կոշտ ու գանգուր մազեր: 13.Թբիլիսիում հրեական հոգեւոր կառույց: 17.Ֆուտբոլային ...: 20.Հնդկուհու հագուստ: 21.Դամո Սահյանի բանաստեղծություններից: 23.... անել, ծաղրել: 25.Բեռնատար անասուն: 27.Անմաքուր, կեղտոտ: 29.Ոխակալ, քինախնդիր: 32.Գիշերային փայլող կետեր երկնքում: 34.Գետ Հայաստանում: 36.Իգական անուն: 37.1973թ. հաղթող Հայաստանի ֆուտբոլային թիմը: 40.Վախ, սարսափ: 42.Դերձակի գործը: 44.Երգչուհի ... Սարիբեկյանը: 45.Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանը (անունը): 46.... Նովիկովա: 50.Ան..., ակն...: 53.Ցանկություն, երազանք: 55.Առաջնորդ ուղտը: 56.Ութ տասնյակ: 58.Խիղճ: 59.Ծառի լայն տերեւները: 60.Հարցական դերանուն: 61.Հայ ֆիդայի Նիկոլը: 62.«Հով սարեր, ... սարեր» (ժող. երգ):

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Վանքային համալիր Արցախում: 2.Հայ առակագիր Խնկո ...: 3.Բագրատունի արքա: 4.Երգչուհի ... Դոլուխանյան: 5.Քրիստոնեությունը Վրաստանում տարածած կույս: 7.Ֆրանսահայ նկարիչ: 10.Լատինական այբուբենի տառ: 12.Կոկորդի հիվանդություն, խպիպ: 14.«Սառցե թագուհին» մուլտֆիլմի հերոսուհի: 15.Խուճուճ, ալեծեւ: 16.Վրացական երգ «...-գվրիտո»: 18.Շինարարական նյութ: 19.Կտոր, պատառ: 22.Մթնոլորտը կազմող գազ: 24.Անձնական դերանուն (հոլովված): 26.«Տիրովին տերն է տանում, ...ն՝ գելը» (ժող. ասացվածք): 27.Աշխարհի «տանիքը»: 28.Հայկական ճաշատեսակ: 30.Խեղճ, թշվառ: 31.Երգչուհի Սոֆիա ...: 33.Աղբյուր ...: 35.Դո, ռե, մի: 38.Պատճառ, մահանա: 39.Լուսին ...: 41.Կրակ, ատր, բոց: 43.Հայերենի շաղկապ: 46.Քաղաք Ռուսաստանում: 47.Հումք, նյութ: 48.Մեծամասշտաբ վաճառք: 49.Մսամթերք: 51.Անհամար, շա՜տ, բյուր: 52.Չու, չվերթ: 54.Քաշում, պրկում: 57.Համ:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ստատիկա: 8.Պենզա: 9.Շվի: 10.Յալթա: 13.Չարազ: 18.Գեղի: 19.Աուտոդաֆե: 22.Սելեն: 23.Սատկած: 28.Նիցշե: 29.Պյուզո: 32.Շիա: 33.Արար: 34.Գալոպ: 37.Հրե: 39.Լուվր: 41.Ենոտ: 44.Ալոջ: 46.Սերո: 47.Ջահ: 49.Խալ: 50.Բաբայան: 52.Ճուտո: 54.Հունար: 55.Ռիչի: 56.Ատ: 57.Շիճուկ: 58.Լաքա:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ֆայլ: 2.Լիկա: 3.Լաշա: 4.Տպիչ: 5.Անդրե: 6.Քանզի: 11.Ասուս: 12.Թլոլ: 14.Ագուտի: 15.Աղվաշ: 16.Թան: 17.Գես: 20.Տելուր: 21.Դեկոր: 24.Անագ: 25.Կցել: 26.Ծերպ: 27.Աշուր: 30.Յաբու: 31.Ջահիր: 35.Արես: 36.Որոր: 37.Հոլ: 38.Երջանիկ: 40.Վահան: 42.Ներու: 43.Տոյոտա: 44.Անարի: 45.Ոխառու: 48.Աբուռ: 51.Բաշ: 52.Ճիլ: 53.Տաք:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774 www.vrastan.ge E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН" Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445